

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՃՇՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ («ԳԻՔՈՐ»)

ՌՈՒՐԵՆ ԶԱՐՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ԲՊՔԱԿԻԳ ԳՆԱԴԱՐ

Հակոբ Կոչոյանի այս աշխատանքն առանձին տեղ է գրավում նրա ստեղծագործության մեջ ընդհանրապես, գրքարվեստի ասպարեզում՝ մասնավորապես: «Գիքորը» ձևավորվել ու պատկերազարդվել է 1923-ին: Մինչ այդ նա ձևավորել է գրքերի ու պարբերական հանդեսների («Պայքար», «Նորք») շապիկներ, պատրաստել գլխազարդեր, նկարազարդել դասագրքեր, գլխանախշեր և վերջնազարդեր արել պարբերական մամուլի համար:



«Գիքորը» Կոչոյանի ձևավորած և նկարազարդած երկրորդ գիրքն է: 20-ական թվականների աշակերտները հիշում են, թե ինչ մեծ տպավորություն գործեց «Գիքորը» պատանի և չափահաս ընթերցողների վրա:

Գրքույկն ունի ջապկանկար, որ կապ չունի պատմվածքի բովանդակության հետ (պարզապես գրքարվեստի մի լավ էջ է), այնուհետև՝ երկու նկար ու 14 տառազարդ, որոնցից ամեն մեկը նպատակ ունի բացահայտելու գրքի բովանդակությունից որևէ տեսարան։ Ցուցահանդեսից ցուցահանդես է անցել այդ տառազարդներից մեկը միայն (1954 թ. Հ. Կոչոյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսի կատալոգ, էջ 29, 1958-ի Հ. Կոչոյանի ստեղծագործությունների անհատական կատալոգ, էջ 16)։ Բացի այդ, մի տառազարդ էլ լույս է տեսել «Կարմիր արևում»՝ «Խոհանոցում» ակնարկի հետ միասին։ «Գիթորի» կոչոյանական պատկերազարդումը, որ անպայման մի նշանակալի էջ էր, մանավանդ այն տարիների համար, չի հիշատակված նկարի մասին լույս տեսած և ոչ մի հոգվածում։ Դժվար է բացատրել, թե ինչն է դրա պատճառը։ Արդյոք ա՞յն, որ «Գիթորից» հետո Կոչոյանը ստեղծել է գրքարվեստի գլուխգործոցներ, և սա ստվերում է մնացել ու մոռացվել, սակայն այդպիսի մոտեցումը գիտական չէ։ Նախ՝ գլուխգործոցները չպետք է պատճառ դառնան շարքային հաջողությունների մոռացվելուն, երկրորդ՝ արվեստագետի համաշափ և թոհիչային զարգացման մեջ ամեն մի աշխատանք իր տեղն ունի։



Ո՛չ Զարենցի գիրքը, ո՛չ Գորկունը, չէին հասնի այդ բարձրությանը, եթե տարիների հասունության վրա չգումարվեր նաև փորձը, կուտակումը, վերջապես՝ ինքնորոշումը։ Թերևս դրա պատճառն այն է, որ Կոչոյանի ձևավորման ու պատկերազարդման բնագրերը կորել էին, և ոչ ոք չգիտեր, թե որտեղ են գտնվում, հետևապես չէին կարող ցուցահանդեսի նմուշ դառնալ։ Լույս տեսած գիրքն էլ մատենագիտական հազվագյուտություն է այժմ։

Պարզվեց, որ «Գիքորը» պատմվածքի Կոշոյանի ձևավորումը, բարեբախտաբար, չի կորել: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի «Գրական մեմորիալ» բաժնում Կոշոյանի ձևավորած շապկանկարից բացի պահվում է 12 տառադարգ: Չկան պատկերազարդումների բնագրերը, թվով երկու աշխատանք, չկան նաև տառազարդերից երկուսի բնագրերը: Հարց է առաջանում. այն մի տառազարդումը, որ հրապարակվել է ալբոմում և պատկերահանդեսների ցուցանմուշ է եղել, ընտրությունն է, արդյոք: Եթե այդպես է, նշանակում է ընտրողի տրամադրության տակ եղել են մյուս տառազարդերը ևս: Հավանական է, որ ալբոմ կազմողների ձեռքը պատահամբ ընկել է այդ մի նկարը միայն:



Ինձ հայտնի չէ, մեր կերպարվեստագետները ինչ կարծիքի են «Գիքորի» պատկերազարդման մասին, քանի որ նրանք, ինչպես ասվեց, այդ աշխատանքին չեն անդրադարձել, նույնիսկ չեն էլ հիշատակել, ասես, այդպիսի գործ չի էլ եղել: Մինչդեռ դա առիթ է տալիս մտածելու այն մասին, թե գրքարվեստին ուղղությամբ է ընթացել նկարչի կյանքում: Հարցն ունի մի այլ և շատ կարևոր կողմ, որի մասին ուզում եմ կարծիք հայտնել, ավելի ճիշտ՝ առաջ քաշել մի հարցադրում, առիթ տալով կերպարվեստագետներին մտորելու դրա շուրջ: Ինձ թվում է, կարելի է երկու միտում նշմարել Կոշոյանի գրքարվեստում: Դրանցից մեկը «Գիքորն» է, որի ամենամշակված օրինակը «Քառսի» նկարազարդումներն են, մյուսը՝ «Հազարան բլրուլը», որի գլուխգործոցը «Սասնա ծռուկերի» նկարազարդումներն են, իր մեջ առնելով Գորկու և Չարենցի գրքերի վրա կատարած աշխատանքը նույնպես: Մի դեպքում գործ ունենք իրականու-

Քյունը ստուգապատում նկարազարդելու հետ (Թումանյան, Շիրվանզադե), մյուս դեպքում՝ հեքիաթային, կախարդական, դիցաբանական, վիպերգական։ Մի կողմից առօրյա կյանքն է իր բախումներով, մյուս դեպքում՝ երևակայական մի աշխարհ։



Ինձ թվում է, որ Կոչոյանի գրքարվեստն այս երկու ուղղությամբ է զարգացել։ Ստեղծագործական ընթացքը, ինքնաճանաչումը, ինքնորոշումը Կոչոյանին մղել են դեպի երկրորդ ուղղությունը։ Դա էր նրա տարերքը։ Մտքի և հոգու թռիչքներն իրենց սլացքի համար գտնում էին ազատ տարածություններ։ Երկրորդի դեպքում՝ Թումանյան, Շիրվանզադե, Կոչոյանը մնում է վարպետ, անում այնպիսի զարդանկար, որի արժեքը վեճ ու կասկած չի հարուցում։ Բայց դա իր շուշը չէ, հարազատ չէ իր ներաշխարհին։

Եթե Զարենցի, Գորկու և Զորյանի գրքերի և «Սասունցի Դավթի» մեջ Կոչոյանը, որպես պատկերազարդող նկարիչ, նյութի և գաղափարի թարգման չէ

միայն, այլ նաև անկախ և համարժեք ստեղծագործող, ապա Թումանյանի և Շիրվանզադեի դեպքում նա սոսկ նկարագարող է, պատկերում է երկի բովանդակության այս կամ այն դրվագը: Հեշտ բան չէ դա Կոջոյանի համար, որովհետև նա այն արվեստագետներից էր, որի համար կյանքի ընկալումը կատարվում էր երևույթների բանաստեղծականացման ճանապարհով, պաթոսի, ոգու թելադրանքով, մինչդեռ Շիրվանզադեի առարկայական ունակումը ջոջափելի պատկերման պահանջ էր առաջադրում: Այնպես որ «Քառսը» պատկերազարդելիս նա ոչ թե նյութի դժվար դիմադրության ճանապարհով պետք է ընթանար, այլ այդ դժվար ճանապարհը հանգեցնում էր ինքնահաղթահարման: Ուրեմն՝ Կոջոյանը պետք է կարողանար անել այն, ինչ իր ստեղծագործական տարերքին ու ջնշին ներդաշնակ չէր:



Ներկա բնութագրումն անելիս մանրամասնությունները մի կողմ թողնելով, կուզենայի ասել միայն, որ «Գիթորի» առաջին նկարազարդումը, որ պատկե-

րում է Համբոյի ու Գիթորի գյուղից դուրս գալու տեսարանն իր գյուղական համայնապատկերով մոտ է Կոշոյանի բնանկարների 20-ական թվականների ընդհանուր շնչին, մանավանդ, եթե նկատի առնվեն նրա մի քանի գլխազարդերը։ Նույնը չի ասվի «Էստի համեցեք» տեսարանի մասին։ Մի դեպքում հայկական աշխարհի բնորոշ ոգին է հաղորդված, երկրորդ դեպքում՝ նկարված է կենցաղային մի պատկեր, որ նկարչի սրտին մոտ չէ։

1932-ից հետո «Գիթորի» բոլոր հրատարակութուններն ունեցել են նոր նկարազարդողներ։

УТОЧНЕНИЯ И ДОПОЛНЕНИЯ («ГИКОР»)

РУБЕН ЗАРЯН

Член-корр. АН АрмССР

Р е з ю м е

Иллюстрации А. Коджояна к «Гикору» Ов. Туманяна являются одним из первых примеров армянской советской книжной графики. В творчестве художника наличествуют две тенденции, выявляющиеся, с одной стороны, в иллюстрациях реалистических книг, с другой—в иллюстрациях сказок, эпоса и легенд. Именно последнее определяет творчество Акопа Коджояна.

